մատոյց Անդրէաս , և գտին , որպէս պատմեաց , յառաջ մատեան եւ երեքին այլազգի վկայք , առեն՝ ըստ մտաց Կայսերական գրոց եկեղեցիք վանօրայք եւ երեք ազգք սեփհական են Հայոց , զհարկս և զտուգանս հատուցանեն ընդ հետեւակաց իւրեանց , որպէս եւ Յոյնք · և յաւուր տօնի Զատկին յառաջ քան զամենեսին Հայէչք մտանեն 'ի Գերեզմանն Քրիստոսի , ապա Հայք և Յոյնք 'ի միասին ։ Լուեալ ատենակալաց զբանս երկաքանչիւր կողմանց , սահմանեցին՝ բաժանել զհարկն հաւասար 'ի միջի իւրեանց , և այնպէս հատուցանել , պատուէր ետուն Հայոց ընդ Յունաց 'ի միասին մտանել 'ի Գերեզմանն ։ Յունաց չպահանջել 'ի Հայոց զհարկս եկեղեցեաց իւրեանց և զտուգանս սպանութեանց , և արձակեցան յատենէ անտի · յ٣٠ Ռամազան ամսոյ , ٩٦٣ (1555) ։ Որպէս յայտ առնեն զայսոսիկ դատաստանագիրն և հրովարտակն ։

Անդրէաս Եպիսկոպոս կարգեալ էր աթոռակալ իւր Խաչատուր Եպիսկոպոս , և նա վարէր զիշխանութիւն Պատրիարքութեան 'ի բացակայութեան նորին , ուստի հրովարտակք և դատաստանագիրք ոմանք տուեալ են յանուն նորա ։ Որպէս 'ի սմին ամի ուխտաւորք Հայոց եւ Յունաց , որք գային յարեւելից յաշխարհէն Հայոց , պատահեցան 'ի ճանապարհի նեղութեանց , զի 'ի հասանիլ նոցա յիւրաքանչիւր քաղաքս և յաւանս , հարկահանք այլազգեաց յափշտակէին զգրաստս նոցա , եւ յետ բազմադիմի նեղութեանց , առեալ յիւրաքանչիւր անձնէ զերկուս ոսկիս , ապա դարձուցանէին առ նոսա զգրաստս նոցին ։ Ի հասանիլ նոցա յԵրուսաղէմ , պատմեցին զանցս իւրեանց Խաչատուր Եպիսկոպոսի , և նա գրեալ ծանոյց 'ի դուռն · որոյ վասն գրեցաւ հրովարտակ առ դատաւորս քաղաքաց , բառնալ զբռնութիւնս այլազգեաց , զի մի տացեն թոյլ նեղել զուխտաւորս 'ի ճանապարհի ։

Սոյն այս Խաչատուր Եպիսկոպոս կամեցաւ շինել և նորոգել զաւերեալ տեղիս եկեղեցւոյն համբարձման քրիստոսի 'ի լեառն Ձիթենեաց , զի այլազգիք բարձեալ տանէին զանկեալ քարինս յորմոց , և 'ի կիր անուին 'ի պէտս շինուածոց իւրեանց ։ Իսկ Խաչատուր առ հրաման 'ի դատաւորէ , և սկսաւ արկանել անդ քարինս 'ի նորոգել · Այ-